

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Խուսաց Սինօդի պաշտօնական «Պեր. ԵԽ.» շաբաթաթերթի մէջ, սկսած անցեալ արքուայ վերջին համարներից, ազադութելէ Սինօդի Օքեր. Պրօկուրորի նորին Կայսերական Մեծութեան մատուցած հաշիւը ռուսաց Եկեղեցու մասին՝ 1896 և 1897 թ. ների համար. Այդ հաշուի մէջ առանձին ուշագրութեան արժանի տեղ է գրաւում ռուս աղանդաւորների վերաբերեալ գլուխը ուր որ. Օքեր Պրօկուրորը նկարագրելով թէ ինչպիսի ընդունակ ծաւալ են սաացել և հետզհետէ տարածուում են բազմաթիւ աղանդներ ռուս ժողովի մէջ, յայտնում է թէ ի՞նչ միջոցներ են գործ դրուել և գործ են դրուում այդ աղանդների գէմ մաքառելու համար.

Համ տարածուուծ է, մանաւանդ հարաւային Խուսաստանուում, շտունդա կոչուած աղանդը, որի տարածմանը նպաստում են բոլորական գերմանացիք, որոնց թիւը բաւականին մեծ է հարաւային Խուսաստանուում։ Աղանդաւորների թուում կան և ուսում սաացած մարդիկ, որոնք շտունդիզմը տօրածելու համար գաղտնի հրատարակութեամբ շատ գրեցիներ են ցրուում ժողովրդի մէջ։ Պ. Օքեր-Պրօկուրորի վեկուցման համեմատ այդ հրատարակութիւնները չեն սահմանափակուում հաւատոյ վերաբերեալ ինդիքներով, այլ ժողովրդի միաքն ուղարկում են և դէպի զուտ հասարակական ուղիղական և պետական կարգի խնդիքներ և լուծում են այդ խնդիքները՝ թէպէտ և ըստ երեւութիւն կրօնական հիմունքներով, Ա. Գրքից վկայութիւններ յառաջ բերելով բայց սօցիալականութեան ոգուով, այն էլ նոյն իսկ ոչ միշտ պօզած։ Մանաւանդ յաճախ շօշափուում են այդ շարադրութեանց մէջ և լուծուում են գիտաւորներ և զանակով՝ մարդկանց բարեկի, ազատութեան հաւատաբան թեան, եղանակաւորների, պետական հարկերի, երգման, սպատերազմի և գատաստանի վերաբերեալ խնդիքներ ։

Եկեղեցական գպրոցների թիւը 1894/95 ռուս. եղել է Խուսաստանուում 31,835, երկու սեռի աշակերմաների թիւը 981,076, 1895/96 ռուս. տարուան ընթացքում այդ թուերն աւելի են եղել՝ գպրոցներինը 34,836, իսկ ռուսոնովներինը 1,116,492, և ու 1-ն յունուարի 1898 թ. եկեղեցական (ծխական և գրադիտութեան) գպրոց

եղել է 38,475, իսկ երկու սեռի աշակերտ 1,338,598 հոգի։ Այս բոլոր ուսումնարանները պահպանելու համար 1897 թ. պետական գանձարանը և սինօդը տուել են 5,612,487 ռ., և 3,634,152 ռուբլի նոյն թուականին գոյացել է եկեղեցիների, վանքերի, շինական հասարակութեանց, բարեգարների և լուսական համար ներից։

Ուսուցիչների թիւը 55 թեմում եղել է 16,991, որոնց մնագոյն մասը աշխարհականներ են, մնացեալներ՝ քահանաններ, սարկաւագներ, աիրացուներ։ Հոգեորականները մեծ մասամբ ծրի են աշխատել, իսկ աշխարհականների ուսուցիչները եկեղեցական ծխական գպրոցներում եղել է 120-ից մինչև 200—240 ռուբլի արեւեկան, շատ քշերը ստացել են 300-ից աւելի, իսկ գրագիտութեան դպրոցներում ըստ մեծի մասին 100 ռուբլուց ել պակաս է եղել տարեկան ուսնիկը։

1896/97 թ. 33 թեմում, որոնց ուսուցիչների կրթական ցենզի մասին միայն տեղեկութիւն կայ, 9,293 աշխարհական ուսուցիչներից և ուսուցչուններից միայն 3,481 (37.4 %) հոգի ցենզ են ունեցել։

— Որոշուած է ուսուց մի նոր տաճար կառուցանել Երևանում, բազարի երկու հասարակաց պարտէջների մէջ տեղում եղած հրապարակի վրայ։ Նոր տաճարի շինութեան համար պետական գանձարանից պիտի տրուի 108 հազար ռուբլի։

ԲՈԼՂԱՐԱԿՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ.

Բոլղարիայի աղդային ժողովը սինօդի առաջարկութեամբ ընդունել է իրեւ օրէնք, որ տարուայ մէջ տօնուեն՝ 52 կիւրակէ և 33 ռուբլ տօն, որոնց թուում կ իշխանական օր և 2 աղդային (Բոլղարիայի աղտաման և Արևելեան Խուսաստանի միացման օրերը)։ Բոլղը տօներին խանութներն ամբողջ օրը փակ պիտի լինին, որճարաններն ու ճաշարանները մինչև ցեր. 11 ժամը, իսկ դիմունութեան մինչև երեկօյեան 5 ժամը։

Նոյն նստաշրջանին աղդային ժողովը սահմանել է, որ ամուսնացովներից փեսացուն պիտի լինի ոչ պակաս քան 19 և հարսնացուն ոչ պակաս քան 17 տարեկան։ ըացառեկ գէպքերում սինօդը կարող է ամուսնութիւն թոյլ տալ աւելի վայ հասակում։

Բայց սորանից որոշուած է, որ քաղաքներում քահանայութիւն անել կազող են կամ հոգեւոր գպրանոցներում աւարտածները կամ այն անձնու, որոնք կանոնաւոր միջնակարգ ուսուումն են ստացել, իսկ գիւղերում քահանայ կարող են լինել երեքդասեան ուսումնարան աւարտողներ։ Սակայն այս կարգը առաջ էլ գործագրուում

էր Բոլղարիայում ովնօդի տնօրէնութեամբ, այնպէս որ այժմ իսկ ոչ միայն քաղաքներում, այլև շատ գեղեցում հոգեոր գլուխոցների գաղոթացքն աւարտած քահանաներ կան:

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ.

Կաթոլիկ եկեղեցու 1898 թ. հրատարակած պաշտօնական տեղեկատվելուներին համեմատ նորա նույնագույն քաղաքներութիւնը ներկայացացնում է հետեւեալ պատկերը: Դուք իրապես տեսնեան գլուխն է, պատկեց յետոյ, կարգինալների կողեւգիան, որ քաղաքացած է 62 հոգուց, սոցանից կարգինալ Խալուզինին (որ նոր էր նշանակուել պատկեց վոլոսնորդ Հռոմով թեմում) նորերում մականամունք է: Կարգինալներից չորսին նշանակել է գեռ Պիոս IX, 56-ին Լեռն XIII-ը: Դոցանից 36 հոգի Խոտալացի են, 26-ը ուրիշ ազգերից: 25 հոգի նոտած են ու curia, այսինքն Հռոմում, 35-ը արքեպիսկոպոսական աթոռներ ունին. 6 հոգի կարգինալ-եպիսկոպոս են, 49 կարգինալ-քահանաց, 5 կարգինալ-սուրբաւագ: Ամէնից հասակաւորը Անդրոնայի արքեպիսկոպոս Կանոնան է, որ 91 տարեկան է, ամէնից փոքրը՝ Կապուցին Ալեւացի-Տուտոն, որ 46 տար. է:

Բացի սոցանից հռոմէական եկեղեցական նույնագույնութեան մէջ կայ 14 պատրիարք, որոնցից ութը լատինական և վեցը արևելեան. բոլոր արքեպիսկոպոսների թիւն է 174 լատինական և 19 արևելեան. կայ 776 եպիսկոպոսութիւն, որոնց թուում 55-ը արևելեան ծիսին են պատկանում: Բոլոր պատրիարքների, արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների թիւը համարուումէ 1,070: Լեռն XIII-ի օրով կաթոլիկ նույնագույնութեան մէջ աւելացել է 2 պատրիարքական աթոռ, 31 արքեպիսկոպոսութիւն և 101 եպիսկոպոսութիւն, 3 առաքելական նույնական թիւն, 61 առաքելական յաջորդութիւն և 11 առաքելական պրեֆեկտուրա: Միայն Եւրոպայում կայ 604 աթոռ, որոնցից 55 Եւրոպիայում:

Լեռն XIII պատրիութեան 90 ամեայ յորելեանի առթիւ, որ տեղի է ունեցել մարտի 2-ին, մատղիք է եղել ու Պետրոսի տաճարում մի քանի «քէատիֆիկացիօ» կատարել, այսինքն «երանելի» ճանաշել մի քանի հոգու: Սոցաթուում առաջին տեղը պատկանում է Անտոնիօ Պրասի քահանային: Սա պատկանում էր Օրատորիայի կարգին, որ խիստ ազգատացել է, մինչ երանելեաց դասը գտառուելը խոշոր ծափեր է պահանջում, մօտաւորապէս 40—50 հազար բուրքի: Երանելի ճանաչուելու միւս թեկնածուներն են Կապուցինների կարգից Մարիա Մադղալենա Մարիննակօ և 28 Փրանսիայի միահօ-

նարները, որոնք սպանուել են արևելեան Ասիայում հեթանոսների ձեռքով: Մինչնոյն ժամանակ որորութեան թեկնածու են համարում երանելի Քիովաննի-Բատակստա-գէ-Լասսալէ և եր. Ռիտա-գէ-Կայելիա:

— Պապի առաջիկաց յորելեանի և նորակապուած «քէատիֆիկացիօ» և «սոցացութման» հանգէսների առթիւ պապականութեան գործականիները յօյս ունին, որ յորելինական տարուան ընթացքում Հռոմ կերթան մինչև չորս միլիօն ուխտաւոր, որոնք «ո. Պետրոսի լուման» կը տանեն համապատասխան շահիով՝ պատկեց գանձարանը լցնելու համար:

ԲՈՂՈՔԱԿԱԾՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԱՆԴԻ,ԻԱ.

Որչափի երկար է տեսում Անդիկացւոց պատերազմը հար. Աֆրիկայի փոքրիկ հասարակապետութիւնների գէմ՝ մարդոց և սոտացուածքի անգին կորուսաներ պատճառելով: Նոյնշտափ բազմանում են զարոյթի ձայններ հանգիստատես ժողովուրդների մէջ, և լրջախոն անգղիացիներից շատերը եկեղեցական ըրջաններում, զգում և խոռապանում են, թէ այս պատերազմը խիստ մեծ մեղքեր է բարդում իրենց մեծ ազգի վերաց: — Allg. Ev. Luth. Kirchenzeitung նմանեցնում է այն յիսուն տարի առաջ անգղիացիների շինաց գէմ մզած պատերազմին, որով նոցա ստիպեցին օպիումի ազատ առևետութ թոյլ տալ և իրենց նուահանգիստաները բանալ յաղթողների առաջ: Հնդկական խաշխաշից անգղիացիները ահագին քանակութեամբ օպիում են պատրատաւում և շինացիներին վաճառելով իւրաքանչիւր տարի միլիոնների օգուա են ստանում: Ի նկատի ունենալով օպիումի մեղքացուցիչ, մարդու ամբողջ կազմուածքը քայլացող և թունաւորդ ազգեցութիւնը՝ շինական կայսրը 1890 թուին մի հրովարտակով արգելեց օպիումի առևառութ, բայց անգղիական զրահակիք նաւելը կարճ միջոցում Երկնային թագաւորութեան՝ ամբողջ ծովափը ու մարտկնածելով և աւելելելով սովիպեցին գնել կրկին իրենց վաճառած թոյնը: Խաչմէո այդ գէպքում այնպէս և այժմ անգղիացւոց կողմից կուռի խիստական շարժառիթը համարում են մի խումբ միլիոնատէների առևտրական շահերը, որոնց համար զոհ է բերուում ուրեմն անիրաւ արար մի աշխատասէր և ազնուաթարոյ քրիստոնեաց ժողովքի խաղաղութիւնը, հաղարաւոր մարդոց արիւնն ու ընտանեկան բաղդաւորութիւնը: Անգղիացւոց հակառակորդ բուրենք ոչ միայն իրեք անիրաւ յարձակման ենթարկուած և առնօբինակ ներուսական ընդգիւմագրութեամբ իրենց

ապպային անկախութեանն ու հութիսականն իրաւունքները պաշտպանող փառքիկ ժողովութեան հասարակաց համալրութեանն են վայելում: այլ և այն բարոյական արժանիքաց համար: որպէս աչքի են ընկնում թէ նոցա առաջնորդները, կամ առանձին անհանութեան: և թէ ամրագծ զօրքը: Դորա վախարէն պատերազմի գոտչում մ: զանուած մի բժշկի նկարագրութեամբ բարոյապէս մրանդամայն ընկած է և զարնութելի վիճակ է ներկացացնում անդպիսական զօրքը: Առհասարակ հայութեան որ մինչ գերմանուկան զօրքի 2^ր և 7^ր տոկոսը ևս ուսկան 4^ր, 3^ր գրանսօնական 4^ր 7^ր տոկոսն է միայն զարքելի տիտերով մարտկուած, անդպիսական զօրքը տալիս է 24⁰₀ Հնդկաստանում նոյն ինք 44⁰₀ 2 զգիաք է կարմանալ ուրեմն որ Հար. Աֆրիկայում գանուած 73.000 զենուորներից 24.000 տկար են տյգպէս և զբեթէ կեոք երկարաւէ տրշա անդների համար անգիւար է համարուած: իսկ երբ ամէն տեսակ ազգեւրեց կազմուած մի այսպիսէ կասկածաւութ ամբոխ քաղաքակրթութեան և արդարութեան անունավ կուուի ասպարէզ է բերուում՝ ընտկանարար բարոյական զգացուածը ուշագ է բարութ գորա գէմ: Ընդզիացի նշանաւոր բարովիներից մէկը Դր Հօրասն առում էր վերջերս իւր քարոզի մէջ, «Բրիտոնական պետութիւնը պէտք է քայլացու իւնիթէ շարժեն արդարութեան հիմունքները որոնց վերաց նա հասաւառուած է: Ա, եց ամսից ի վեր ազգի հոգին անդապար վշացնում են ուռաւերսով և առփորսական են զարձել ամենարիբու կերպով խօսելը բարոյական որդէնքների մասին: Մի ազգի ինչպէս և իւրաքանչիւր ունհամի մէծութիւնը ցի կարելի նորա սասցուածքի ընդդարձակութեամբ շափել, այլ առաւել նորա հսկուց մէծութիւնը ոգէտքը է շափ լինի: Պասամութիւնը առելի ուղանդակ պատակեր մեր առաջ չի գրել քան մի մէծ ազգը որ պատերազմ է հրատապակում իւր աղքեցութիւնը հանգային զորքերում զօրքացնելու համարու—Մի ուրիշ քարոզիչ, Աէմբէլ առում է, «Որչափ ցաւալի՛ է: որ Ընդզիան իրեն իրեւ խաղաղութեան սիրոց ազգ հռչակելու հետ մէկական առաջինն եղաւ: որ Առուաց Կայութը խաղաղութեան ձգ առումներից ցի առայ պատերազմ սկսեց: Ըստաւնակ մէզ համազել են աշխատաւում: թէ այս ձեռանարկութեանն արդար էր և առանձատակելի սոտիպոզականութեամբ մէզ վերայ ձգուած: բայց ոչ: Ընդզիական ազգին մատրեցըն թուլութեան մի ժամում: Խթէ մնանք իրօք ոտիսուած կոտու ի ելնէնք, առանց ականչն խացնող պաղակակների աեղի կունենար այդ, որոնցով մամին մարզեկ պատերազմի լուր ընդունեցին: գլուխը կախ և յանձն առած պատասխանատուութեան ծանրութիւնը փոքր իշտած է ըմբռնելով»: — Ըստերը պահանջում էին

այսպիսի տպաւորութեանց ներքոց որ անդ զիւռ
կան ժողովրդի համար մի ընդհանուր տպաշխա-
րանց որ նշանակուիր բայց առարիգներ եղան,
թէ ասաբներն իրած անյաջողութիւնների տառջ
ընթառւելու նշան համարին այդ և փոխարե-
սը Թուգուհու համարանց մի ընդհանուր ազօթքի
որ որոշուեցաւ Ազգեպիսկոպոսների կողմից այդ
օրուայ համար կազմած երկու ազօթքները այդի
նու ընկնում իրենց անկողմնակուլ ընտառու-
թեամբ ոչ մէկի մէջ անդ զիւռացիք յադթութիւն
չեն խոնդրում այլ խոստովանում ենց որ բարօ-
րութեան մէջ Առաւու ծուն մաս անալին է մասամբ
ներկայ պատերազմի պատճառը և պաշտպանու-
թիւն են ազերուում կուուող զիւռու որեների միեւ-
թարութիւն նոյն ազգակիցների համար— Առ-
կայն անդ զիւռան ազդին յատաւ կ ծագրահեղ ամ-
բարաստ մասութեամբ այս ազօթքների գէմ բողո-
րոջներ եռ դանուել են սրմուք պնդում են թէ
Անդ զիւռ կարիք չունի ոչ երկարից ոչ մարդկան-
ցց օգնութիւն խնդրելու :

Բուրերի արխական առաքելութ մեջն մտախն մեծ զավասանքով է խօսում անդզիացի քահանաներից մէկը, որ և պաշտօնի վերաբերեալ ամենաալիուր պարաւականութիւնները կատարելիս առելիթ է ունեցել ի մօտոյ ծանօթանալու նոցա հետ։ «Նրկու բան առանձնապէս իմ ուշագրութիւնը գրաւեց, առում է նա; Բուրերն ամենին ջանք չէին գործ զնում իրենց ասածներով մեզ զարմացնելու։ Կոքա խօսում էին խիստ որտաքաց և ընտկան պարզութեամբ, գրեթէ բուլը դէպերում խօսակցութիւնը մենք էինք ոկրուում։ թախծութեամբ, գրեթէ ողբալով էին խօսում նոքա մեր ոպանուած զնուուրների մասին։ «Մեր ոպատերազմը չէ այս, առում էին նաքա, միւլինատէրների պատերազմն է։ Մենք թշնամութիւն չունինք այս խեզմերի դէմ։ Մենք առում ենք պատերազմը, մենք խաղաղասէր մարզիկ ենք։ Մեր ցանկութիւնն է շուտով մեր տներն ու ազարակները վերադառնալ, մեր արաերը մշտկել, և ոչ թէ պատերազմ վարել։»—Բուրերի վերայ ըստքած մէջադըսանքը, թէ նաքա հպատակ նեգըների հետ ամարդարար են վարուում։ Հերքում է մի անդզիացի միսիոնար, որ իրերի խոկական դրութիւնն այսպէս է նկարագրում։ «Պէտք է չմուտանանք, որ քրիստոնէութիւն ընդունած նեգըն նոյն նեգըն է մ'սում։» մի մեծ երեխայ, որին համար պատասխանատու են սպիտակամորքինը՝ մի գուցէ քաջազակթութիւնն ի չար գործ գնէ։ Տրանսվալում և Կապվանդիայում նեգըն հետ վարուելու եղանակի մէջ զիմաւոր ապարերութիւնն այն է, որ անդզիական հողում նա որչափ սիրտն ուղէ օգի դնել կարող է, և հետեւանքը լինում է նորա արագ անկումը, այսուեղ սպանու-

թիւնների, կողոպտումների և աւրիշ խոշոր յանցանքների 90% սեերի վրայ է ընկնաւմ։ Ընդհակառակն Տրանսվալի կառավարութիւնն արգելել է բոլորովին սեերին օղի վաճառել, և այ այդ օրենքը չպահէ մեծ տուգանքի է ենթարկուում։ Թորա արգելենքը պէտք է համարել, որ Պրետօրիայում 11 ամիս ապրելով երթէք հարասծ նեղը չեմ աեսել, մինչդեռ Կապշագի փողոցներում երեկոյեան 9 ժամին լիքն են արքած նեղրեզը։ Ամեննեին օգուտ չունի այնպիսի արտօնութիւններ տալ նոցա, որ գործածել չեն կարողանում։ Թող արգարութեամբ վարուեն նոցա հետ, ինչպէս հայրը իւր որդւոց հետ։ Առ այժմ ազատութիւնը նոցա պէտք չի դայ՝ այդ համոզումն ունեն ամենքը Հար. Աֆրիկայում։ թէ բուրերը և թէ անդզիացիք։ Բայց իմ համոզմամբ բուրելո՞ն աւելի լաւ են հասկանում նեղրերին քաղաքակրթելու կերպը քան անդզիացիք։

ԳԵՐՄԱՆԻԱ.

Անուանի հայասէը զը. Լեսպիւս, որ Հայոց մէջ գործող գերմանական որբախնում ընկերութիւնների հոգին է և զիլսաւոր զեկավարը՝ կրկին սկսել է հրատարակել Der Christliche Orient ամսաթերթը, որ 1897 թ.-ին մի տարի միայն հրատարակուեցաւ * և ապա փոխարէնը լրաց էին տեսնում թռուցիկ տեղեկութիւններ ընկերութիւնների գործունէութեան մասին։ Յունուարփետարուար համարի առաջնորդող յօդուածի մէջ Լեսպիւս մի համառօտ ակնարկ ձգելով իւր մինչև այժմ ի նպաստ տաճկահայոց գործ գրած աշխատութիւնների վերայ՝ ասում է. «Սակայն պէտք է արդեօք մեր անելքը կատարած համարենք, երբ Գերմանիայի կողմից աւելի քան 2000 որերը խնամք են զանում, մի քանի հարիւր այրիներ պարապմունք, հիւանդներ և թշուառներ խնամուում են, և քրիստոնէական ողորմածութիւնը Հիւս։ Պարսկաստանում Հայաստանում, Քիւրդիստանում, Միջազգետքում, Տաճկահայաստանի այլ ասիսկան նահանգներում և Բուլղարիայում, որից գեռ պատմելու բան շատ ունիմ՝ մեր հաստատութիւնները դիմելու հետ մէկտեղ, գլխաւորապէս այս խնդրի հետագօտութեան էր նուիրուած... Մեր գործունէութիւնը արևելքում ազատ պէտք է լինի յամննայն գէպս գաւանափախական որեւէ փորձից, երևոյթն անդամ չունենայ, և քրիստոնէաների մէջ նոր համայնքներ կազմելուց հետու լի-

նի, եթէ մենք չենք կամինում աւելի քանզել, քան շինել։ Մենք պէտք է նոյնչափ անկեղծ և անկողմնակալ, նոյնչափ սերալիք և պատրաստակամ կերպով վերաբերութիւնք գէպի հին քրիստոնէայ եկեղեցիները, ուր որ կան, որչափ գէպի բողոքական համայնքները Արտիհետե մենք բարոյապէս իրաւունք չունինք լուսաւորչական ծնօգնների որբացած որգւոց սառցնելու իրենց եկեղեցուց, ուստի պէտք է բաւականանանք նորա քրիստոնէական—բարոյական կրթութիւն և ուսում տալով, որով աւելի արած կլինինք քը ըստոնէութեան յառաջադիմութեան համար, քան ուղղակի քարոզութեամբ ... Քանի որ հայկական գաւառների գրեթէ բոլոր կենտրոններում ամերիկական միսիոննարներ հաստատուած են, մէկ երկրորդ աւետարանական միսիոն պէտք է նոցա մրցակից գառնար և խանգարիչը. մեր պարտականութիւնը կարող է ուրեմն ամերիկական միսիոննի հետ շփուելիս միայն նորան օժանդակելը լինել, առաւել այնպիսի հանդամանքներում, ուր ամերիկական գործունէութեան եղանակը կազում է։ Ամերիկացւոց ժողովրդական գպարոցների սրանչելի կազմակերպութիւնը, որ մասամբ արդէն լուսաւորչական համայնքներն են իրացըրել են՝ այն թոյլ կողմն ունի, որ նոցա ուսուցիչները ոչ ինչ կանոնաւոր պատրաստութիւն չեն ստանուած, որ առհասարակ քարձագոյն կրթութիւնը ամերիկացիների մէջ գորիկ է կլասիկական հիմունքներից։ Այդ պատճառաւ և ամերիկական գպարոցն անկարող է եղեւ բողոքական համայնքների մէջ առաջնորդող գըլուխների մի կրթուած քարձը գաս յառաջ բերել։ Ըթապատոզ մահմեդական աշխարհի համար ամերիկացիք օտարականներ են ու միշտ կմնան նոցա կրթական եղանակը գաղափար չտալով ամեննեին իսլամի և արևելքի պատմական գարզացման մասին՝ օտարացնում է քրիստոնեաներին ընկի երկրից և գուրս է քաշում սեփական աւգութեան միջից, առանց ուրիշ ազգերի համար պէտքական անդամներ ընծայելու։ Մահմեդական աշխարհում հին կամ նոր քրիստոնեայ եկեղեցիների միջոցաւ աւետարան քարոզել անհնարին բան է։ Մէկին միւսից բաժանող վիճը շատ խոր է, և քանի քրիստոնէական եկեղեցիները յառաջադիմում են, այնպան աւելի խորանում է։ Քրիստոնեաների և մահմեդականների մէջ գարերով հաստատուած ընածին կրօնական հակակրութիւնը առաջիններին անընդունակ է գարմաւ և միւսներին գժկամակ միմեանց մօտենալու։ Մանաւանդ քրիստոնէական ուսման արևմուտքում ընդունած մետերապութիւնը անհասկանալի է ընդ միշտ մահմեդականների համար ... Արևելքում կատարելիք գործը, որ ամէնից առաջ աւետարանական Գերմանիան կարող է անել՝ թէ

* Տես. Արարատ 1897 փետրվար, եր. 66:

քրիստոնեաների և թէ մահմեդականների նկատմամբ, մի նոր գաւանութիւն քարոզելը չէ, այլ քաղմակողմանի կրթական—ուսումնապիտական մի աշխատառութիւն, որով հին եկեղեցիների կրթութեան և քրիստոնէական ըմբռնման մակերեւոյթը քարձանայց կուլամի կրօնական բովանդակութիւնը լաւ հասկացուի և մահմեդական աշխարհի համար մի առանձին քրիստոնէական առուտածարանութիւն կազմուեւ:

Այսուհետև Լեսպիւս թախանձադին կոչումն է անում բարեկամներին եռանդով շարունակելու սկսած գործը և բաղմաթիւ կարիքների, որոնց թուում անցեալ տարրուանից մնացած 30 հազար մարկ պարտքը ծածկելու համար՝ գրամական օգնութիւն հասցնելու:—Այս տետրակի բավանդակութիւնը կազմում են, բացի առաջնորդողից, մի ոտանաւոր՝ «Յովհաննէար Պաթմոս կզզում»: Ուռհա քաղաքի և նորա պատմական յիշատակարանների մի հմուտ նկարագրութիւն, գերմ. Որբախնամ ընկերութեան գործերի վեճակը Պարսկաստանում: Պ. և Տ. Ռորբախների այցելութիւնը ո. Էջմիածնում, որի մէջ սերուած է նաև «Մայր Երափսի» մի հատուածի գերմաներէն թարգմանութիւնը: Մոլլս Նասրեդին, մի տարօրինակ սուրբ (թուրքերէնից փոխադրած զրոյց):

—Ազատամիտ և պահպանողական տարրերի մրցումը բոլորքական Գերմանիայում նոր կենդանութիւն ստացաւ վերջերս ազատամիտ ու զզութեան երկայացուցիչների գէմ գործ գրուած նորանոր ճշշումների շնորհեւ: Պատուր Վայնդարգի պաշտօնից արձակուելուն համար առաջացած ազմուկը գեռ չէր գագարել, որ Համբուրգի մի պատա, իւր ներքին եկեղեցական կառավարութիւնն ունեցող՝ համայնք ստիպեց հրաժարական տալ երիտասարդ պատուր Հելմաննին, նորա ազատամական քարոզների համար, և լրագիրներում ու եկեղեցական ըջաններում սաստկացու բանակուիը այն խնդրի շուրջը, թէ որչափ իրաւացի է արդեօք այսպիսի վարմունքը և նորա յաճախակի կրկնումներն ի՞նչ ապագայ են գուշակում:

—Աւելի կարեւոր և ուշադրութեան արժանի հանգամանք էր պատփ. Կէօնիկի Բոննում Հին կտակարանի ուսուցչապետ նշանակուելը, նոր ուսուցչապետ ընտրելու իրաւունքն իսկապէս պատկանում է իւրաքանչիւր բաժնի ուսուցչական խմբին, և Բոննի համալսարանի առուածարանի բաժնի ուսուցչապետները միաձայն ընտրել էին իրենց ընկերակից «արտաքրոյ կարգի» պրոֆեսոր Վայնհոլդին: բացի որովհետև կերպին յայտնի աղատամիտներից է՝ նախարարութիւնը շնաստատեց այդ ընտրութիւնը և հաստատեց արտաքրած զրոյցը:

Հրաւերեց Ռոստոկից յայտնի պահպանողական Կէօնիկին: Սակայն թէպէս կառավարութիւնն այսպէս հովանաւորում է ամէն կերպ պահպանողականներին բայց նոցանից այնչափ քիչ են աչքի ընկնող գիտնականներ, որ եղածներին ստիպուած են տեղից տեղ քաշելը և բաց մնացած տեղերն աշխուամենացնիւ աղատամիտներն են ըռնումք: Այդպէս Մարքուրդի նախկին ուսուցչապետ Կոմս Բառու գիսսին երեք տեղից միաժամանակ հրաւեր ստացաւ և մայրաբաղար Քերլին ընարեց, իսկ նորա տեղ հրաւերուած է Մարքուրդի գիտնակարանի գիտութեան առաջնակարգ և գլխաւոր աղատամիտներից մէկը պատփ: Բուգակ:

ՀԻՆ ԿԱԹՈԼԻԿԻՆԵՐ.

Մարտի 30-ին վախճանուեցաւ Բոննում Դէպէնդերի գլխաւոր աղակիցներից և հին կաթոլիկ համայնքի հիմնադիրներից մէկն ևս՝ նշանաւոր ստատածաբան պրոֆ. Ոոյց: Պապի անվանականութեան գէմ բազոքելուց յետոյ նա 1870 թ.-ին իւր ընկերների հետ ուսուցչապետական աթոռուից զրկուեցաւ, բայց շուտապ գերմ. կառավարութիւնը հին կաթոլիկների առանձին աստուածաբան բաժին բաց արաւ Բոննում ուր և նա գասախօսում էր մինչև իւր կեանքի վերջին օրերը:—Այսպիսի հեղինակաւոր անձանց պակասելով կոթոլիկ համայնքը հարկաւ շատ բան է կորցնում: բայց չի տկարանում և իւր քայլայման չի մօտենում: ինչպէս օր աւոր փափագանք սպասում են համեմականները, այլ պապական եկեղեցու գէմ եղած և զօրացող տաելութիւնը նպաստում է ընդհակառակն նորա աճման և զարգացման, երբեմն զժգոհների ամբողջ խմբեր նորա գիրկը մղելով: Աերջին հակապապական շարժումն: օրինակ, Աւստրիայում տրամադրում է շատերին աւելի հեշտութեամբ հին կաթոլիկների քան բոզոքականների մօտ պապատան որոնել, որովհետև նոցա համար հեշտ չէ կարուել այն բաղմաթիւ եկեղեցական կարգերից: Ճէսերից և սովորութիւններից որոնց մէջ կրօնական սնունգ են գտել մանկութիւնից ի վեր և որ ամբողջութեամբ պահել է հին կաթոլիկ համայնքը, մինչ բոզոքական եկեղեցին իւր մերկութեամբ ամէն հրապոյը կորցնում է: Աւստի շնայելով հին կաթոլիկները շատ քիչ միջոցներ ունին և աւստի կառավարութիւնը նոցա վերաց ծանր ճնշումներ է գործ գնում՝ այնուամենայնիւ նոքա բաւական թուով գաւանակիցներ վաստակեցին և շարունակում են վաստակել:

